



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

20/08/2019

ՈՐՈՇՈՒՄ N 52-Ա

ԱՎԵՏԻՔ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, 30-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 14³ հոդվածի 8-9 կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920 և 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշումներով, հիմք ընդունելով Ավետիք Հովհաննիսյանի լիազորած անձ Հայկ Ասլանյանի 2019 թվականի օգոստոսի 9-ի թիվ 2249 դիմումը և համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական տարածքում գտնվող Ավետիք Հովհաննիսյանին վարձակալության իրավունքով պատկանող գյուղատնտեսական այլ հողատեսք նշանակության հողերից 0,3 հա /N07082019-09-0018/ փոխադրել քնակավայրերի հասարակական կառուցապատման նպատակային նշանակության:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնությունների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

[Handwritten signature]

ԱՐԱՁԱՆՅԱՆ ԷՐԻԿ

[Handwritten signature]

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՄՐԵՐ

[Handwritten signature]

ԳԵԿՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

[Handwritten signature]

ԴՈԼՈՒՆՑ ԴԱԿԻԹ

[Handwritten signature]

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

[Handwritten signature]

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

[Handwritten signature]

ՄԿՐՏՁՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



ՄԵՆՈՒԱ ՀՈԿՍԵՓՅԱՆ

2019թ. *օգոստոսի* « *10* »
ք.Գորիս